ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2024թ. հունվար-օգոստոս

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-օգոստոս կազմել է 9.0%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է 0.8 տոկոսային կետով:

- ՏԱՑ-ի 9.0% աճին հիմնական դրական նպաստում ունեցել է առևտրի ոլորտը՝ 2.9 տոկոսային կետով, որին հաջորդում են արդյունաբերության ոլորտը՝ 2.6 տոկոսային կետով, ծառայությունների ոլորտը՝ 2.6 տոկոսային կետով, շինարարության ոլորտը՝ 1.2 տոկոսային կետով և գյուղատնտեսությունը 0.5 տոկոսային կետով:

ՏԱՑ–ի 9.0%-ին ճյուղերի նպաստը, տոկոսային կետ
2024 հունվար–օգոստոս



2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 5.2%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 5.6 տոկոսային կետով (տ/կ), կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.8 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 0.7 տ/կ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.7 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.5 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.4 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.2 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.2 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն են ունեցել տրանսպորտ՝ -2.0 տ/կ և տեղեկատվություն ու կապ -2.0 տ/կ ծառայության տեսակները:

Ծառայությունների ծավալի աճ



3. Առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 20.4%, ինչը ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի և մեծածախ առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 9.4% և 28.7% աճերը:
- Բացասական ազդեցություն է ունեցել ավտոմեքենաների առևտրի ոլորտի -7.8% կրճատումը:



4. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 16.2%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 30.6% աճը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալի 83.2% աճը (որից՝ համաշխարհային բանկի միջոցները՝ 32.1%, ՎԶԲ-ն՝ 410%-ով, ԱԶԲ-ն՝ 140%, ԳԶԲ-ն՝ 91.9%, Եվրոպական ներդրումների բանկ՝ 55.3%) և բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 70.2% աճ:



- Բացասական ազդեցություն են ունեցել համայնքների միջոցներով իրականացված շինարարության -18.7%, մարդասիրական օգնության միջոցներով -28.4% և կազմակերպությունների միջոցներով -0.8% կրճատումները:

5. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 21,709.0 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 79.6%, որից արտահանման ծավալը կազմել է 9,694.7 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 110%, իսկ ներմուծումը՝ 12,014.3 ԱՄՆ դոլար, աճը 59.3%:

1.1. Արտահանում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն այլ երկրների գծով (4.8 անգամ): ԱՊՀ երկրներ արտահանումը կրճատվել է -18.2%-ով (որից՝ ԵԱՏՄ՝ -18.4%), իսկ ԵՄ երկրները՝ -24.2%-ով:
- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք աճը՝ 23.8%, բուսական ծագման արտադրանք, աճը՝ 25.5%, պատրաստի սննդի արտադրանք՝ 0.1%, հանքահումքային արտադրանք՝ 15.0%, թուղթ և թղթից իրեր՝ 21.0%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 0.5%, իրեր քարից, գիփսից, ցեմենտից՝ 4.8%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 7.0 անգամ, սարքեր և ապարատներ՝ 0.5%, արվեստի ստեղծագործություններ՝ 6.0%:

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -40.3%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -26.7%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -22.6%, մանածագործական իրեր՝ -1.1%, կաշվի հումք,կաշի,մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ -2.3%, փայտ և փայտյա իրեր՝ -85.1%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -35.2%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -0.6%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -80.9%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ -3.6%:

Արտահանման ծավալի աճ



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



1.2. Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն ԱՊՀ երկրների գծով (3.4 անգամ), որից ԵԱՏՄ-ն՝ 3.5 անգամ: ԵՄ երկրների ներմուծումը կրճատվել է -17.0%-ով, իսկ այլ երկրները՝ -11.5%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է 59.3%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը՝ 5.3%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 5.6%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 12.9%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 3.5%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 3.9%, փայտ և փայտյա իրեր՝ 0.4%, թուղթ և թղթից իրեր՝ 3.7%, մանածագործական իրեր՝ 3.0%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 2.9%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 1.4%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 600%, մեքենաների սարքավորումներ և մեխանիզմներ՝ 2.8%, սարքեր և ապարատներ՝ 1.5%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 15.9%, արվեստի ստեղծագործություններ՝ 190%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ բուսական ծագման արտադրանքը՝ -0.7%, հանքահումքային արտադրանքը՝ -3.9%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -6.8%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -1.0%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ -54.2%:

Ներմուծման ծավալի աճ



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6. Արդյունաբերություն

- Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 13.7%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. մշակող արդյունաբերությունը՝ 20.7%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 11.7%, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ 5.5%: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է -8.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ



1.3. Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ Սննդամթերքի արտադրությունը՝ 0.7%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 9.9%, մանածագործական արտադրատեսակների արտադրությունը՝ 6.4%, փայտանյութի մշակում, բացի կահույքից՝ 25.4%, թղթի և թղթե արտադրատեսակների արտադրությունը՝ 3.9%, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը՝ 1.4%, դեղագործական արտադրանքի արտադրությունը՝ 2.7%, ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը՝ 7.8%, հիմնական մետաղների արտադրությունը՝ 240.0%, պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրությունը՝ 13.4%, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը՝ 11.1%, էլեկտրական սարքավորանքի արտադրությունը՝ 60.7%, կահույքի արտադրությունը՝ 29.9%:

Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի «խմիչքների արտադրությունը» կրճատվել է -2.3%-ով, «հագուստի արտադրությունը»՝ -1.8%-ով, «կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը»՝ -5.8%-ով «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների րտադրությունը»՝ -16.8%-ով, «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը»՝ -10.9%-ով, «Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում»՝ -29.6%-ով, «այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրությունը»՝ -24.9%-ով, «արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում»՝ -16.5%-ով, «մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում»՝ -8.7%-ով:

Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի նպաստումը մշակող արդյունաբերության աճին, 2024թ. հունվար-օգոստոս, տոկոսային կետ